ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/131

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2025 թ. N 131

«ԳՅՈՒՄՐՈՒ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Գյումրու Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Բուլվարային 10ա**

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մայիսի 07-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Գյումրու Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳՕՀՊՄՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 01 փետրվարի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 23 սեպտեմբերի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 04-06-ը դեկտեմբերի 2024 թ
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 07 փետրվարի 2025 թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 17 մարտի 2025 թ.

ԳՕՀՊՄՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմենուհի Սարգսյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
- **Էլեն Դավթյան՝** Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի ուսումնական գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ,
- **Արաքս Աղաջանյան՝** Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի կրթության որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ,
- **Ինգա Հարությունյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ, ուսանող փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է՝
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԳՕՀՊՄՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ԳՕՀՊՄՔ-ում առկա են բարելավման կարիք ունեցող ուղղություններ, որոնք վերաբերում են որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացին

Քոլեջում իրականացվող «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագիրը կառուցված է տեսական և գործնական բաղադրիչների արդյունավետ համադրմամբ՝ ապահովելով ուսանողների մասնագիտական հմտությունների ձևավորում և գործնական փորձի հնարավորություններ: Դասախոսական կազմի փորձառությունը, կառուցողական հետադարձ կապի կիրառումը, դասալսումների և փորձի փոխանակման մեխանիզմները նպաստում են դասավանդման մեթոդների

շարունակական կատարելագործմանը, իսկ շրջանավարտների ներգրավումը դասավանդման գործընթացում ապահովում է կայունություն և շարունակականություն:

Քոլեջին խորհուրդ է տրվում կրթական ծրագրերում առավել հստակ ներկայացնել մարզիչների պատրաստման ձևաչափը՝ սահմանելով արդյունքների արձանագրման և գնահատման եղանակները: Այս քայլերը կնպաստեն մարզչական բաղադրիչի համակարգված իրականացմանը և կբարձրացնեն որակավորման արժանահավատության աստիճանը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է առաջնահերթ քայլեր ձեռնարկել քոլեջի բակում գտնվող կիսակառույց շենքի կառուցման ավարտի ուղղությամբ՝ դիտարկելով այն որպես ռազմավարական կարևորություն: Խորհուրդ է տրվում հարցը քննարկել կառավարման խորհրդում և գնահատել պետական կամ այլընտրանքային աջակցության հնարավոր ուղիները:

II. Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում

Քոլեջում ռազմավարական կառավարման և որակի ապահովման համակարգի ձևավորման ուղղությամբ կատարվել են որոշակի սկզբնական քայլեր, սակայն համակարգային մոտեցման բացակայությունը դեռևս խոչընդոտում է կայունության և շարունակական զարգացման ապահովմանը: Խորհուրդ է տրվում հստակեցնել ռազմավարական նպատակները և դրանց հասնելու չափելի արդյունքները՝ ապահովելով դրանց ներառումը կառավարման և պլանավորման բոլոր մակարդակներում: Նպատակահարմար է ձևավորել տվյալների հավաքագրման և վերլուծության թվայնացված համակարգեր, որոնք կապահովեն հիմնավորված որոշումների կայացում և ռազմավարական նպատակների վրա հիմնված մշտադիտարկում: Որակի ապահովման համակարգի կայացման համար անհրաժեշտ է ամրապնդել պատասխանատուի ինստիտուցիոնալ դերակատարումը, հստակեցնել ներքին գործառույթները և ձևավորել գործընթացների գնահատման և բարելավման միասնական շրջանակ:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունն դեռևս չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը

Քոլեջում հետազոտական և միջազգայնացման ուղղություններով առկա են դրական նախաձեռնություններ: Խորհուրդ է տրվում ուսումնական պլաններում հստակ սահմանել ուսանողների վերլուծական և հետազոտական կարողությունների ձևավորման նպատակներն ու դրանց հասնելու մեխանիզմները՝ ներառելով համապատասխան բաղադրիչներ՝ առանձին առաջադրանքների, ուսումնասիրությունների, մարզական արդյունքների վերլուծությունների և հետազոտական ձևաչափով դասընթացների միջոցով: Այս նպատակով անհրաժեշտ է մշակել քաղաքականություն և ընթացակարգեր՝ վերապատրաստելով անձնակազմին: Միաժամանակ միջազգայնացման ուղղությամբ անհրաժեշտ է մշակել համագործակցության քաղաքականություն և գործողությունների ծրագիր՝ սահմանելով ռազմավարական գործընկերների շրջանակը, համագործակցության ձևերը և պատասխանատու դերակատարներին: Արտաքին կապերի համակարգման նպատակով խորհուրդ է տրվում ամրապնդել պատասխանատուների կարողությունները՝ օտար լեզվի իմացության, դրամաշնորհային նախագծերի մշակման և միջազգային կապերի կառավարման ուղղությամբ: Օտար լեզուների իմացության բարձրացումը ուսանողների և դասախոսների շրջանում կարող է դիտարկվել որպես ռազմավարական առաջնահերթություն:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գյումրու Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ԳՕՀՊՄՔ Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույցը:
3. Թերությունների վերացման ծրագրում նախատեսել I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողություններ՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
4. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
5. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԳՕՀՊՄՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**
2025 թ., մայիսի 07